ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ԱՆԴԵՐՍԵՆ
(1805–1875)

Դանիացի հեքիաթագիր Հանս Քրիստիան Անդերսենը ծնվել է Ֆյուն կղզում գտնվող Օդենսե քաղաքում: Հայրը՝ Հանս Անդերսենը, եղել է աղքատ կոշկակար, մայրը՝ Աննա Մարին, լվացարարուհի էր: Հանսը եղել է ընտանիքի միակ զավակը: Դանիայում հավատում են այն լեգենդին, թե Անդերսենն ունեցել է թագավորական ծագում, քանի որ իր ինքնակենսագրականում նա գրել է, որ փոքր տարիքում արքայազնից բացի այլ ընկերներ չի ունեցել: Դպրոցում սովորելուն զուգահեռ Անդերսենը ընտանիքին օգնելու նպատակով ջուլհակի, ապա նաև դերձակի մասնագիտություն է սովորել: Ստեղծագործել է մանուկ հասակից: Սիրել է տիկնիկային թատրոնը:

Տասնչորս տարեկանից մեկնել է Կոպենհագեն, ընդունվել Թագավորական թատրոն: Այնուհետև ուսանել է վճարովի դպրոցում, որի վճարի մի մասը մուծել է Ֆրեդերիկ Վեցերորդ թագավորը: Հետագա տարիներին աճում էր նրա հեքիաթների փառքը: 1847թ. նա առաջին անգամ մեկնեց Անգլիա և արժանացավ հաղթական ընդունելության: Աշխարհում նա հռչակված է որպես հայտնի հեքիաթների հեղինակ՝ «Անճոռնի ճուտիկը», «Արքայադուստրը սիսեռահատիկի վրա», «Եղևնին», «Ձրահարսը» և այլն:

ԾԵՐ ԿԱՂՆՈՒ ՎԵՐՋԻՆ ԵՐԱՋԸ

Ա

Անտառում՝ զառիվայրին՝ ծովափին մոտ, կանգնած էր մի ծեր կաղնի: Նա ընդամենը երեք հարյուր վաթսունհինգ տարեկան էր: Ծառերի այդ տարիքը հավասար է մարդկային կյանքի օրերին: Մենք արթնանում ենք առավոտյան, քնում գիշերը ու երազ տեսնում: Ծառը այլ է. նա ստիպված է արթուն մնալ տարվա երեք եղանակներին և քնել միայն ձմեռնամուտին: Ձմեռը նրա հանգստի ժամանակն է՝ իր գիշերը՝ երկար գարունից, ամառվանից ու աշունից հետո: Ամառային տաք օրերին փոքրիկ էֆեմերաները (այդպես են կոչվում մեկ օր ապրող թիթեռները) պտտվում էին կաղնու շուրջը, վայելում կյանքն ու երկար պարելուց հետո հանգստանում կաղնու լայն տերևների վրա:

– Խեղճ, փոքրիկ արարած: Ողջ կյանքդ բաղկացած է այս մեկ օրից: Ինչ կարճ է: Պետք է, որ թախծես,– այսպես էր ասում ծեր կաղնին ամեն օր:

– Թախծեմ: Ինչպե՞ս,– թիթեռների հիմնական պատասխանն էր: – Իմ շուրջն ամեն ինչ այնքա՜ն գեղեցիկ է, այնքա՜ն լուսավոր ու ջերմ, որ ես միշտ երջանիկ եմ:

– Բայց ընդամենը մեկ օր. հետո ամեն ինչ ավարտվում է:

– Ավարտվո՞ւմ,– կրկնեց թիթեռը,– ինչպե՞ս է ավարտվում: Դու նույնպե՞ս:

– Ո՛չ: Ես գուցե ապրեմ քո կյանքի նման հազարավոր օրեր, ու դա այնքան երկար է, որ դու չես կարող հիշել:

– Ես չեմ հասկանում. դու ապրում ես հազարավոր օրեր, իսկ ես՝ հազարավոր պահեր, ու ես երջանիկ եմ լինում: Արդյոք ամբողջ գեղեցկությունը ավարտվո՞ւմ է, երբ դու մեռնում ես:

– Ո՛չ,– պատասխանեց ծառը,– այն շա՜տ ավելի երկար է տևում, հավերժության չափ երկար, չեմ կարող անգամ ասել՝ որքան երկար:

– Դե, ուրեմն,– ասաց թիթեռը,– մենք միևնույն ժամանակը ունենք ապրելու համար, միայն թե մենք տարբեր կերպ ենք հաշվում:

Ու այդ փոքրիկ արարածը պարեց ու լողաց օդում, զվարճացավ՝

մետաքսե ու թավշյա թևերը թափահարելով բուրավետ քամինե-
րի մեջ, որոնք վայրի վարդերի ու ծաղկած ծառերի բույրով էին
լցված: Երկար ու գեղեցիկ օրն այնքան լի էր անուշահոտությամբ
ու ուրախությամբ, որ թիթեռը հոգնեց սեփական երջանկությունից
ու վայելքից: Նրա թևերը այլևս անկարող էին թափահարել, և նա
դանդաղորեն ու զգուշորեն իջավ, նստեց կանաչ խոտի վրա, գլու-
խը թափահարեց, հետո քնեց: Նա մահացավ:

– Խնդձ, փոքրիկ Էֆեմերա,– բացականչեց կաղնին,– ինչ կարճ
կյանք ունեցար:

Եվ այդպես ամռան յուրաքանչյուր օր կրկնվում էր միևնույն
պարը, տրվում էին միևնույն հարցերը ու ստացվում միևնույն պա-
տասխանները: Միևնույնը կրկնվում էր արդեն տասնամյակներ:
Նրանցից յուրաքանչյուրը հավասարապես երջանիկ և ուրախ էր:

Կաղնին արթուն մնաց գարնանային առավոտներին, ամառա-
յին կեսօրերին ու աշնանային երեկոներին: Հանգստի ժամանակն
էր մոտենում: Ձմեռ էր գալիս: Փոթորիկները սկսել էին իրենց եր-
գը:

– Բարի գիշեր, բարի գիշեր...

Այստեղ ու այնտեղ սկսեցին տերևներ ընկնել:

– Մենք քեզ համար օրորոցային կերգենք ու կօրորենք քեզ:
Քնի՛ր, քնի՛ր: Մենք հաճույքով կերգենք քեզ համար: Մենք կօրո-
րենք քո ճյուղերը, ու նրանք կշառաչեն հաճույքից: Անո՛ւշ քուն,
անո՛ւշ քուն. սա քո երեք հարյուր վաթսունհինգերորդ գիշերն է: Դու
ամենաերիտասարդն ես աշխարհում: Անո՛ւշ քուն, ամպերը ձյուն
կթափեն քեզ վրա ու կծածկեն քեզ ջերմ ու ապահով: Անո՛ւշ քուն
ու բարի՛ երազներ:

Ու կանգուն կաղնին՝ տերևներից մերկացած, հանգստի անցավ
երկար ձմռան ընթացքում: Նա պետք է շատ երազներ ու կյանքում
պատահած դեպքերը տեսներ, ինչպես մարդիկ են տեսնում: Այդ
հսկա ծառը նույնպես մի ժամանակ փոքրիկ ճյուղ է եղել:

Ըստ մարդկանց կյանքի տևողության՝ կաղնին արդեն ապ-
րում էր իր չորրորդ դարը: Այն ամենամեծ ծառն էր անտառում:
Նրա գագաթը ծածկում էին կողքի ծառերը, ու այն երևում էր ան-
գամ ծովից: Նավաստիների համար այն ուղենիշ էր համարվում:
Եթե միայն իմանար, թե քանի մարդու աչք է հետևում իրեն ամեն

օր: Աղավնիները բույն էին կառուցել իր գագաթի ճյուղերի վրա, կկուները երգում էին ու իրենց ձայնը տարածում ողջ անտառով, իսկ աշնանը տերևները կարմրում էին, թռչունների երամները՝ հանգստանում ճյուղերի վրա մինչ տաք երկրներ չվելը: Բայց արդեն ձմեռ էր. ծառը տերևազուրկ էր, ու տեսանելի էին նրա կորացած ճյուղերն ու բունը: Ագռավները հերթով գալիս նստում էին նրանց վրա ու խոսում սկսվող դժվար ժամանակների մասին:

Բառային աշխատանք

1. Նշի՛ր կաղնի բառի հատկանիշները՝ ծեր, կանգուն...
2. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ վա_սունհինգ, թա_ծել, ըն_ամենը, թա_շյա, ըն_ացք, վեր_անալ:
3. Տեքստում գտի՛ր *կապար*, *ջերմ*, *ավարտվել*, *ամբողջ* բառերի հոմանիշները:
4. Ի՞նչ թռչունների անուններ են գործածված հատվածում: Նրանցից մեկի մասին հաղորդո՛ւմ պատրաստիր:

Տեքստային աշխատանք

1. Քո բառերով ներկայացրո՛ւ ծեր կաղնու և թիթեռի զրույցը՝ պահպանելով հարց ու պատասխանը: Ի՞նչ են անվանում կաղնուն:
2. Նկարի՛ր Ա հատվածից մի դրվագ:
3. Լսի՛ր «Փոթորկի երգը»: Փակի՛ր աչքերդ և արտահայտի՛ր զգացողությունդ:
4. Բացատրի՛ր՝ ինչ ես հասկանում օրորոցային երգ ասելով:
5. Լսի՛ր Բորիս Չայկովսկու «Սիմնջացող անտառ» սյուիտը (շարանվագ) և արտահայտի՛ր հույզերդ:

Ի՞նչ էի զգում երաժշտություն լսելիս:	Ի՞նչ էի տեսնում:
Ի՞նչ մտքեր էին ծագում:	Ի՞նչ գույն ուներ երաժշտությունը:

Բ

Հենց Սուրբ ծննդյան գիշերն էր, երբ կաղնին երազ տեսավ: Նա զգում էր՝ ինչպես է մոտենում տոնական ժամանակը. երազում լսում էր եկեղեցիների զանգի ձայները ու ջերմություն զգում, ինչպես ամռան մի շոգ օր կզգար: Նրա հզոր գագաթը խոնարհվում էր կանաչ սաղարթի վրա, արևի շողերը խաղում էին իր տերևների ու ճյուղերի արանքում, իսկ օդը լի էր բույսերի ու ծաղիկների բույրով, գունավոր թիթեռները պարում էին իր շուրջը. ասես ամբողջ աշխարհը ստեղծվել է հենց նրանց համար: Այն ամենը, ինչ տեղի էր ունեցել կաղնու կյանքում յուրաքանչյուր տարի, նա տեսնում էր իր երազում: Նա տեսնում էր հին ժամանակների ասպետներին, ազնվական կանանց ձիեր հեծած իր կողքով անցնելիս: Լսում էր որսի սկիզբն ազդարարող շչակների հնչյուններն ու շների հաչոցը: Նա տեսավ թշնամու զինվորներին՝ գունավոր հագուստներով ու փայլուն զենքերով, աղեղներով ու վահաններով, որոնք իրենց վրաններն էին տեղադրում ու հենց այդտեղից էլ հարձակվում: Հսկման խարույկները կրկին վառվեցին, տղամարդիկ սկսեցին երգել: Նա տեսավ սիրահար զույգերի, որոնք իրենց երջանկությունն էին գտնում իր հյուրընկալ ճյուղերի ու լուսնի լույսի տակ: Նրանք իրենց անուններն էին քանդակում իր կանաչ բնի վրա: Մի օր՝ երկար տարիներ առաջ, ուրախ զբոսաշրջիկները կիթառներ ու տավիղներ էին կախել իր կանաչ ճյուղերից: Հիմա կարծես կրկին կախված են. նա կրկին լսում է նրանց նվագի ձայնը: Աղավնիները երգում էին կաղնու ապրումների մասին ու պատմում այն տարիների մասին, որ կաղնին դեռ պիտի ապրեր:

Ու մի պահ թվաց, թե ծառի յուրաքանչյուր ճյուղի ու արմատի մեջ նոր կյանք է սկսվում: Ծառը սկսեց ձգվել ու տարածվել: Որքան բարձրանում էր, նույնքան էլ հզորանում, լայնանում ու լիանում էր, չափերով մեծանում, ինքնաբավությունը ավելանում էր, ու դրա հետ ավելանում էր նաև երջանկությունը, ջերմությունն ու պայծառությունը: Նրա գագաթային ճյուղերը արդեն ամպերից վեր էին անցել, իսկ թռչունների երամները հենց ճյուղերի տակով էին անցնում: Աստղերը նույնիսկ կեսօրին էին տեսանելի, վառ ու

շողշողուն: Ինչ երջանիկ պահեր էր ապրում ծեր կաղնին, ինչ ուրախ ու անհոգ:

– Իսկ որտե՞ղ են կապույտ ծաղիկները, որ աճում են ջրի վրա,– հարցրեց կաղնին: Նա ցանկանում էր, որ իր բոլոր սիրելիները իր կողքին լինեն:

– Մենք այստեղ ենք, մենք այստեղ ենք,– երգում էին նրանք:

– Իսկ որտե՞ղ է անուշաբույր ուրցը, որ ամռանն աճեց, և ջրաշուշանները, որոնք անցած ամռանը ծածկեցին երկիրը իրենց բույրով, և վայրի խնձորենիները՝ իրենց ծաղիկներով, և խիտ անտառը, որ ամեն տարի ավելի ու ավելի է հարստանում:

– Մենք այստեղ ենք, մենք այստեղ ենք,– երգեցին նրանք միաձայն: Նրանք կարծես նախապես էին հայտնվել կաղնու երազի մեջ:

– Սա շա՜տ գեղեցիկ է, չափազա՜նց գեղեցիկ՝ իրական լինելու համար: Նրանք բոլորն այստեղ են՝ մեծ ու փոքր: Կարո՞ղ է այսքան երջանկություն մեկ տեղում լինել:

– Երկնքում ու հավերժական կյանքում հնարավոր է,– կրկին միաձայն երգեցին բոլորը:

Ու ծեր կաղնին ավելի ու ավելի էր բարձրանում ու հանկարծ զգաց, թե ինչպես են արմատները պոկվում հողից:

– Այսպես ճի՛շտ է, այսպես շա՜տ լավ է,– ասաց ծառը.– այլևս չկան ինձ պահող շղթաներ: Ես հիմա կարող եմ ավելի վեր բարձրանալ՝ դեպի լույսն ու փառքը: Ու բոլորը, ում ես սիրում եմ, ինձ հետ են գալիս: Բոլորն այստեղ են:

Այսպիսին էր ծեր կաղնու երազը: Ու մինչ նա երազում էր, հզոր փոթորիկը նրան տապալեց Սուրբ ծննդյան օրը: Ու ծովն ալեկոծվեց: Կաղնու արմատները պոկվեցին հողից հենց այն պահին, երբ նա երազում տեսնում էր իր բարձրանալը: Նա ընկավ, ու իր երեք հարյուր վաթսունհինգ տարիներն ավարտվեցին, ինչպես էֆեմերաների մեկ օրը:

Ափին մոտենալուն պես նավաստիները նկատեցին ընկած կաղնուն:

– Ծառը ընկել է՝ ծեր կաղնին. մեր նշանակետը այլևս չկա: Փոթորիկն է եղել պատճառը: Ո՞վ կփոխարինի նրան: Ավա՜ղ, ոչ ոք,– բացականչեցին նավաստիները:

Սա կաղնու մահախոսականն էր՝ կարճ, բայց իմաստալի:

Արևը դուրս եկավ, ու փոթորիկն անցավ: Բոլոր եկեղեցիների զանգերը սկսեցին ղողանջել, ու սկսվեց Սուրբ ծննդյան պատարագը:

Հնչում էին շարականներն ու ջերմացնում մարդկանց հոգիները: Իսկ կաղնին ավելի՛ ու ավելի էր բարձրանում իր վերջին երազում:

Բառային աշխատանք

1. *Միաձայն*, *կղամարդ*, *կեսօր* բառերի արմատներով նոր բառեր կազմիր:
2. Բնագրում գտիր նախադասություններ, որոնցում առկա են հոմանիշներ և հականիշներ (մեկական զույգ):
3. Հատվածից դուրս գրիր *-ական* վերջածանցով բառեր:

Տեքստային աշխատանք

1. Քո բառերով ներկայացրու կաղնու երազը:
2. Երևակայությամբ ներկայացրու, թե ինչ էին պատմում աղավնիները ծեր կաղնու մասին:
3. Նկարիր Բ հատվածից մի դրված և մեկնաբանիր նկարը:
4. Ինչո՞ւ էր կաղնին ուզում, որ բոլոր սիրելիներն իր կողքին լինեին:
5. Հեքիաթին նոր ավարտ հորինիր: